Ընդունված է 2008 թվականի նոյեմբերի 27-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Ընդունել ի գիտություն, որ՝

1) Հայաստանի Հանրապետության 2009 թվականի համախմբված բյուջեն կկազմի՝

ա. եկամուտների գծով՝ 927,1 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումներից ստացվող մուտքերի),

բ. ծախսերի գծով՝ 967,1 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումների),

գ. դեֆիցիտը (պակասուրդը)՝ 40,0 մլրդ դրամ.

2) Հայաստանի Հանրապետության համայնքների 2009 թվականի բյուջեները կկազմեն՝

ա. եկամուտների գծով՝ 50,8 մլրդ դրամ (ներառյալ՝ պետական բյուջեից ստացվող պաշտոնական դրամաշնորհները),

բ. ծախսերի գծով՝ 50,8 մլրդ դրամ:

Հոդված 2. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեն՝

	Գումարը (հազար դրամներով)
1. Եկամուտների գծով	905,400,595.0
2. Ծախսերի գծով	945,449,770.0
3. Դեֆիցիտը (պակասուրդը)	40,049,175.0

Հոդված 3. Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորմանն ուղղել հետևյալ միջոցները՝

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	**Գումարը** (հազար դրամներով)
ԸՆԴԱՄԵՆԸ	40,049,175.0
այդ թվում՝	
Ա. Ներքին աղբյուրներ	30,537,541.5
Բ. Արտաքին աղբյուրներ	9,511,633.5

Հոդված 4. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին՝ 2009 թվականի ընթացքում, օրենքով վերապահված իրավասությունների սահմաններում դրամավարկային քաղաքականության վերաբերյալ որոշումներ ընդունելիս առաջնորդվել 12-ամսյա գնաճի 4 + / -1.5 տոկոս թիրախով:

Հոդված 5. Հայաստանի Հանրապետության կառավարությանը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորումը 2009 թվականի բյուջետային տարվա ընթացքում իրականացնել բացառապես «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հոդված 6. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի եկամուտները (առանց սույն օրենքի 9-րդ հոդվածի 18-րդ կետով և 11-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 15-րդ և 16-րդ կետերով սահմանված դեպքերում ստացվող եկամուտների), ըստ ձևավորման աղբյուրների դասակարգման առանձին խմբերի, հետևյալ չափերով՝

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	ԳՈՒՄԱՐԸ (հազար դրամներով)
ԸՆԴԱՄԵՆԸ	**905,400,595.0**
այդ թվում՝	
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	727,454,000.0
Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	128,412,476.5
Պաշտոնական դրամաշնորհներ	34,712,798.5
Այլ եկամուտներ	14,821,320.0

Հոդված 7. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեից հատկացումները (առանց սույն օրենքի 9-րդ հոդվածի 18-րդ կետով և 11-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 15-րդ, 16-րդ և 19-րդ կետերով սահմանված դեպքերում կատարվելիք հատկացումների), ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման, հետևյալ չափերով՝

Բաժին	Խումբ	Դաս		Գումարը (հազար դրամներով)
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	945,449,770.0
			այդ թվում՝	
01			ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	123,136,456.9
			այդ թվում՝	
	01		Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ	62,996,258.6
		01	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	14,794,515.0
		02	Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ	40,338,353.6
		03	Արտաքին հարաբերություններ	7,863,390.0
	03		Ընդհանուր բնույթի ծառայություններ	2,300,350.6
		01	Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ	398,823.5
		02	Ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայություններ	1,260,387.8
		03	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	641,139.3
	04		Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք	5,882,672.1
		01	Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք	5,882,672.1
	05		Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	2,084,856.6
		01	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	2,084,856.6
	06		Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	5,894,674.2
		01	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	5,894,674.2
	07		Պետական պարտքի գծով գործառնություններ	15,931,426.2
		01	Պետական պարտքի գծով գործառնություններ	15,931,426.2
	08		Կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտներ	28,046,218.6
		01	Կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտներ	28,046,218.6
02			ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	149,611,982.0
			այդ թվում՝	
	01		Ռազմական պաշտպանություն	144,321,924.1
		01	Ռազմական պաշտպանություն	144,321,924.1
	03		Արտաքին ռազմական օգնություն	115,806.0
		01	Արտաքին ռազմական օգնություն	115,806.0
	04		Հետազոտական և նախագծային աշխատանքներ պաշտպանության ոլորտում	950,640.0
		01	Հետազոտական և նախագծային աշխատանքներ պաշտպանության ոլորտում	950,640.0
	05		Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	4,223,611.9
		01	Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	4,223,611.9

Բաժին	Խումբ	Դաս		Գումարը (հազար դրամներով)
03			ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	64,190,975.6
			այդ թվում՝	
	01		Հասարակական կարգ և անվտանգություն	39,055,159.2
		01	Ոստիկանություն	25,076,378.1
		02	Ազգային անվտանգություն	13,978,781.1
	02		Փրկարար ծառայություն	4,511,588.9
		01	Փրկարար ծառայություն	4,511,588.9
	03		Դատական գործունեություն և իրավական պաշտպանություն	10,665,397.4
		01	Դատարաններ	10,339,849.3
		02	Իրավական պաշտպանություն	325,548.1
	04		Դատախազություն	2,886,333.2
		01	Դատախազություն	2,886,333.2
	05		Կալանավայրեր	7,072,496.9
		01	Կալանավայրեր	7,072,496.9
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	103,074,921.7
			այդ թվում՝	
	01		Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ	2,487,996.6
		01	Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերություններ	2,487,996.6
	02		Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն	35,934,058.1
		01	Գյուղատնտեսություն	11,698,215.7
		02	Անտառային տնտեսություն	1,831,493.0
		04	Ոռոգում	22,404,349.4
	03		Վառելիք և էներգետիկա	19,352,072.2
		02	Նավթամթերք և բնական գազ	81,000.0
		03	Միջուկային վառելիք	214,338.8
		04	Վառելիքի այլ տեսակներ	11,845,636.0
		05	Էլեկտրաէներգիա	7,211,097.4
	04		Լեռնաարդյունահանում, արդյունաբերություն և շինարարություն	198,222.0
		01	Հանքային ռեսուրսների արդյունահանում, բացառությամբ բնական վառելիքի	178,222.0
		03	Շինարարություն	20,000.0
	05		Տրանսպորտ	54,603,903.2
		01	Ճանապարհային տրանսպորտ	50,785,284.6
		04	Օդային տրանսպորտ	142,618.6
		05	Խողովակաշարային և այլ տրանսպորտ	3,676,000.0
	06		Կապ	479,000.0
		01	Կապ	479,000.0
	07		Այլ բնագավառներ	891,517.9
		03	Զբոսաշրջություն	263,000.0
		04	Զարգացման բազմանպատակ ծրագրեր	628,517.9
	08		Տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	181,116.0
		01	Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի հարցերի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	52,344.0

Բաժին	Խումբ	Դաս		Գումարը (հազար դրամներով)
		04	Լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	128,772.0
	09		Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	(11,052,964.3)
		01	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	(11,052,964.3)
05			**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**	**6,424,660.7**
			այդ թվում՝	
	01		Աղբահանում	28,790.0
		01	Աղբահանում	28,790.0
	03		Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար	213,656.0
		01	Օդի աղտոտման դեմ պայքար	213,656.0
	04		Կենսաբազմազանության և բնության պաշտպանություն	4,439,298.5
		01	Կենսաբազմազանության և բնության պաշտպանություն	4,439,298.5
	06		Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	1,742,916.2
		01	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	1,742,916.2
06			**ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**18,631,636.6**
			այդ թվում՝	
	01		Բնակարանային շինարարություն	2,689,909.5
		01	Բնակարանային շինարարություն	2,689,909.5
	03		Ջրամատակարարում	13,189,736.3
		01	Ջրամատակարարում	13,189,736.3
	04		Փողոցների լուսավորում	1,500,000.0
		01	Փողոցների լուսավորում	1,500,000.0
	05		Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	4,000.0
		01	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	4,000.0
	06		Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	1,247,990.8
		01	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	1,247,990.8
07			**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ**	**66,087,610.2**
			այդ թվում՝	
	01		Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ	4,823,795.6
		01	Դեղագործական ապրանքներ	3,095,715.1
		03	Բժշկական սարքեր և սարքավորումներ	1,728,080.5
	02		Արտահիվանդանոցային ծառայություններ	25,770,447.6
		01	Ընդհանուր բնույթի բժշկական ծառայություններ	9,338,841.8
		02	Մասնագիտացված բժշկական ծառայություններ	7,043,984.5
		03	Ստոմատոլոգիական ծառայություններ	999,104.5
		04	Պարաբժշկական ծառայություններ	8,388,516.8
	03		Հիվանդանոցային ծառայություններ	23,300,013.2

Բաժին	Խումբ	Դաս		Գումարը (հազար դրամներով)
		01	Ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայություններ	6,398,697.5
		02	Մասնագիտացված հիվանդանոցային ծառայություններ	7,026,520.6
		03	Բժշկական, մոր և մանկան կենտրոնների ծառայություններ	9,874,795.1
	04		Հանրային առողջապահական ծառայություններ	3,038,393.1
		01	Հանրային առողջապահական ծառայություններ	3,038,393.1
	06		Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)	9,154,960.7
		01	Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր	8,011,674.1
		02	Առողջապահության (այլ դասերին չպատկանող)	1,143,286.6
08			**ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ**	**19,831,794.4**
			այդ թվում՝	
	01		Հանգստի և սպորտի ծառայություններ	1,509,125.1
		01	Հանգստի և սպորտի ծառայություններ	1,509,125.1
	02		Մշակութային ծառայություններ	12,392,086.9
		01	Գրադարաններ	1,894,230.2
		02	Թանգարաններ և ցուցասրահներ	2,013,754.3
		03	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	1,486,322.9
		04	Այլ մշակութային կազմակերպություններ	903,546.5
		05	Արվեստ	4,766,506.2
		06	Կինեմատոգրաֆիա	725,181.1
		07	Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում	602,545.7
	03		Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայություններ	4,865,098.2
		01	Հեռուստառադիոհաղորդումներ	3,943,828.8
		02	Հրատարակչություններ, խմբագրություններ	852,284.4
		03	Տեղեկատվության ձեռքբերում	68,985.0
	04		Կրոնական և հասարակական այլ ծառայություններ	618,576.1
		01	Երիտասարդական ծրագրեր	438,984.4
		02	Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ	179,591.7
	06		Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)	446,908.1
		01	Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)	446,908.1
09			**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**	**126,909,742.2**
			այդ թվում՝	
	01		Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն	20,672,264.5
		02	Տարրական ընդհանուր կրթություն	20,672,264.5
	02		Միջնակարգ ընդհանուր կրթություն	55,370,287.8
		01	Հիմնական ընդհանուր կրթություն	39,526,445.4
		02	Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն	15,843,842.4
	03		Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	5,035,621.4

Բաժին	Խումբ	Դաս		Գումարը (հազար դրամներով)
		01	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն	1,984,319.3
		02	Միջին մասնագիտական կրթություն	3,051,302.1
	04		Բարձրագույն կրթություն	7,682,328.5
		01	Բարձրագույն մասնագիտական կրթություն	7,082,070.7
		02	Հետբուհական մասնագիտական կրթություն	600,257.8
	05		Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն	3,669,528.1
		01	Արտադպրոցական դաստիարակություն	2,394,592.4
		02	Լրացուցիչ կրթություն	1,274,935.7
	06		Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	33,955,147.9
		01	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	33,955,147.9
	08		Կրթություն (այլ դասերին չպատկանող)	524,564.0
		01	Կրթություն (այլ դասերին չպատկանող)	524,564.0
10			**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**	**252,483,612.9**
			այդ թվում՝	
	01		Վատառողջություն և անաշխատունակություն	1,323,183.0
		01	Վատառողջություն	198,503.5
		02	Անաշխատունակություն	1,124,679.5
	02		Ծերություն	180,476,355.7
		01	Ծերություն	180,476,355.7
	03		Հարազատին կորցրած անձինք	178,780.0
		01	Հարազատին կորցրած անձինք	178,780.0
	04		Ընտանիքի անդամներ և զավակներ	43,280,415.8
		01	Ընտանիքի անդամներ և զավակներ	43,280,415.8
	05		Գործազրկություն	4,200,012.4
		01	Գործազրկություն	4,200,012.4
	06		Բնակարանային ապահովում	7,904,119.5
		01	Բնակարանային ապահովում	7,904,119.5
	07		Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	5,088,076.1
		01	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	5,088,076.1
	09		Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	10,032,670.4
		01	Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	3,858,973.8
		02	Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	6,173,696.6
11			**ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ**	**15,066,376.8**
			այդ թվում՝	
	01		ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ	15,066,376.8
		01	ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	15,066,376.8

Հոդված 8. Հաստատել սույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված բյուջետային հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծախսատեսակները, ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, հետևյալ չափերով՝

	Գումարը (հազար դրամներով)
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**945,449,770.0**
այդ թվում՝	
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	**770,779,100.6**
այդ թվում՝	
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ	**66,466,168.8**
այդ թվում՝	
Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ	61,550,563.7
Փաստացի սոցիալական ապահովության վճարներ (գործատուի կողմից)	4,915,605.1
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ	**168,888,236.7**
այդ թվում՝	
Շարունակական ծախսեր	9,988,993.5
Գործուղումների և շրջագայությունների ծախսեր	3,181,266.8
Պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերում	137,836,578.6
Այլ մասնագիտական ծառայությունների ձեռքբերում	2,381,459.3
Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)	1,714,109.4
Նյութեր	13,785,829.1
ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐ	**15,931,426.2**
այդ թվում՝	
- Ներքին տոկոսավճարներ	11,872,305.6
- Արտաքին տոկոսավճարներ	4,059,120.6
ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ	**20,507,794.5**
այդ թվում՝	
Սուբսիդիաներ պետական կազմակերպություններին	19,148,708.1
Սուբսիդիաներ ոչ պետական կազմակերպություններին	1,359,086.4
ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	**92,232,863.6**
այդ թվում՝	
Դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին	946,881.8
այդ թվում՝	
- Ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին	946,881.8
Ընթացիկ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին	80,826,599.1
որից՝	
- Ընթացիկ դրամաշնորհներ պետական կառավարման հատվածին	1,202,403.0
- Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին	78,378.5
- Պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ	27,491,019.5
- Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին	346,120.5
- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	17,776,371.4
- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին	4,811,435.4
- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	29,120,870.8
Կապիտալ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին	10,459,382.7
որից՝	
- Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին	1,295,572.1
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ	**243,115,656.5**
այդ թվում՝	
Սոցիալական ապահովության նպաստներ	11,000.0

	Գումարը (հազար դրամներով)
Սոցիալական օգնության դրամական արտահայտությամբ նպաստներ (բյուջեից)	64,301,313.4
այդ թվում՝	
- Հիվանդության և հաշմանդամության նպաստներ բյուջեից	2,363,075.0
- Մայրության նպաստներ բյուջեից	3,343,262.8
- Երեխաների կամ ընտանեկան նպաստներ բյուջեից	36,576,713.1
- Գործազրկության նպաստներ բյուջեից	3,132,000.0
- Կենսաթոշակի անցնելու հետ կապված և տարիքային նպաստներ բյուջեից	88,146.0
- Հուղարկավորության նպաստներ բյուջեից	393,980.0
- Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից	2,525,922.3
- Այլ նպաստներ բյուջեից	15,878,214.2
Կենսաթոշակներ	178,803,343.1
այդ թվում՝	
Կենսաթոշակներ	178,803,343.1
ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	**163,636,954.3**
այդ թվում՝	
Նվիրատվություններ ոչ կառավարչական (հասարակական) կազմակերպություններին	1,994,184.9
Հարկեր, պարտադիր վճարներ և տույժեր, որոնք կառավարման տարբեր մակարդակների կողմից կիրառվում են միմյանց նկատմամբ	83,964.6
Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ	1,349.1
Այլ ծախսեր	146,486,078.9
Պահուստային միջոցներ	15,071,376.8
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	174,670,669.4
այդ թվում՝	
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	**187,989,079.4**
այդ թվում՝	
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	178,415,030.6
այդ թվում՝	
ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	152,129,025.3
այդ թվում՝	
- Շենքերի և շինությունների ձեռքբերում	700,500.0
- Շենքերի և շինությունների շինարարություն	71,284,887.6
- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	80,143,637.7
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ, ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ	21,839,578.3
այդ թվում՝	
- Տրանսպորտային սարքավորումներ	4,139,660.7
- Վարչական սարքավորումներ	6,581,862.9
- Այլ մեքենաներ և սարքավորումներ	11,118,054.7
ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	4,446,427.0
այդ թվում՝	
- Աճեցվող ակտիվներ	574,745.0
- Ոչ նյութական հիմնական միջոցներ	258,550.0
- Գեոդեզիական-քարտեզագրական ծախսեր	386,060.5
- Նախագծահետազոտական ծախսեր	3,227,071.5
ՊԱՇԱՐՆԵՐ	9,474,048.8
այդ թվում՝	
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐ	9,474,048.8
ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐ	100,000.0
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	(13,318,410.0)

Հոդված 9. Սահմանել, որ՝

1) 2010 թվականի հունվար ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ նաև՝ կառավարություն) չի շարունակի 2009 թվականի բյուջետային տարվա պարտավորությունների գծով գործառնությունների ձևակերպումների իրականացումը.

2) 2009 թվականի ընթացքում առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցումից (սեփականաշնորհումից) Հայաստանի Հանրապետության դրամով ստացվող միջոցները մուտքագրվում են գանձապետական միասնական հաշվի սեփականաշնորհման հատուկ ենթահաշվում, իսկ արտարժույթով ստացվող միջոցները՝ փոխարկվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում և մուտքագրվում գանձապետական միասնական հաշվի սեփականաշնորհման հատուկ ենթահաշվում.

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը սույն օրենքով նախատեսված բյուջետային վարկը տրամադրվում է մինչև 2010 թվականի հունվարի 1-ը մարման ժամկետով՝ տարեկան 0.01 տոկոս տոկոսադրույքով.

4) 2009 թվականին քաղաքացիական ծառայողների բազային պաշտոնային դրույքաչափը կազմում է 40,000.0 դրամ, հարկային և մաքսային ծառայողների բազային պաշտոնային դրույքաչափը՝ 55,500.0 դրամ, իսկ յուրաքանչյուր պետական մարմնի քաղաքացիական ծառայողների տարեկան պարգևատրման ֆոնդի միասնական տոկոսային դրույքաչափը՝ այդ մարմնի գծով Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեով նախատեսված քաղաքացիական ծառայողների աշխատավարձի տարեկան ֆոնդի 10 տոկոսը.

5) 2009 թվականին Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնային դրույքաչափը կազմում է 440,000.0 դրամ, իսկ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի պաշտոնային դրույքաչափը՝ 392,000.0 դրամ.

6) «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28.1-ին հոդվածի I մասի 1.1-րդ կետի «դ» ենթակետով և 1.2-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված՝ Երևան քաղաքի տարածքում գոյացող եկամտատեսակները 2009 թվականին ամբողջությամբ ուղղվում են Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորմանը.

7) համայնքների բյուջեներին «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածով եկամտահարկից և շահութահարկից նախատեսված մասհանումները

2009 թվականի բյուջետային տարում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից չեն կատարվում, իսկ բնապահպանական վճարներից մասհանումները կատարվում են «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.

8) սույն օրենքով նախատեսված ֆինանսական համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարի՝ ըստ առանձին համայնքների բաշխման նպատակով իրականացվող հաշվարկներում (համաձայն «Ֆինանսական համահարթեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետի) օգտագործվում են յուրաքանչյուր համայնքի գծով օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված՝ այդ համայնքի բյուջե 2007 թվականին վճարման ենթակա հողի հարկի և գույքահարկի տարեկան գումարները (առանց հողի հարկի և գույքահարկի գծով 2007 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա չմարված ապառքների, տույժերի և տուգանքների, ինչպես նաև այդ հարկերի գծով 2007 թվականին հաշվարկված տույժերի և տուգանքների գումարների), ավելացված համայնքների ավագանիների կողմից (ավագանիներին օրենքով տրված իրավասությունների սահմաններում) ընդունված որոշումներով ֆիզիկական անձանց և կազմակերպություններին գույքահարկի գծով արտոնությունների տրամադրման հետևանքով այդ հարկի գծով համայնքների 2007 թվականի բյուջեներում եկամուտների կորուստների գումարները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների գծով եկամուտների կորուստների օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցման ենթակա գումարները: Սահմանել, որ այն համայնքների գծով, որոնց տեղական ինքնակառավարման մարմինները 2008 թվականի հունիսի 1-ի դրությամբ փաստացի իրականացրել են գույքահարկ և (կամ) հողի հարկ վճարող ֆիզիկական անձանց հաշվառման գործառույթներ, 2009 թվականի ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառվում են այդ համայնքների ղեկավարների՝ համապատասխանաբար գույքահարկի և (կամ) հողի հարկի գծով հայտնած ելակետային տվյալները.

9) Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների 2007 թվականի բյուջեներում եկամուտների կորուստների փոխհատուցման գումարների հաշվարկներում կիրառվում են 2006 թվականի համանման կորուստների գումարների հաշվարկներում կիրառված պետական տուրքի գծով ելապետային տվյալները.

10) քաղաքացիաիրավական հարաբերություններից ծագած պարտքի դիմաց պետական կառավարչական հիմնարկի ձեռք բերած գույքի իրացումից եկամուտները հաշվեգրվում են այն հաշիվներին,

որտեղ պետք է հաշվեգրվեր տվյալ պարտքի գումարը.

11) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների հիման վրա գույքն առանձնացնելիս, գույքն ստացող պետական կառավարչական հիմնարկը պարտավոր է մատակարարին վճարել վերջինիս ներկայացրած հարկային հաշվում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարը, մատակարարի անունից այն վճարելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համապատասխան եկամտային հաշվին՝ որպես մատակարարի՝ ավելացված արժեքի հարկի գծով պարտավորության կատարում.

12) Երևան քաղաքում ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման վճարներից, ինչպես նաև պետական սեփականություն համարվող և Երևանի քաղաքապետարանին հանձնվող ինքնակամ կառույցների ուղղակի վաճառքից, աճուրդով օտարումից և վարձակալությունից Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջե ստացվող բյուջետային մուտքերն ուղղվում են Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորմանը՝ կառավարության սահմանած կարգով.

13) սույն օրենքի N 1 հավելվածում «Երևանի համաքաղաքային նշանակության ծախսեր» ծրագրով Երևանի քաղաքապետարանի գծով նախատեսված ծախսերի ֆինանսավորումը 2009 թվականին իրականացվում է Երևան քաղաքում տեղաբաշխված պետական սեփականություն համարվող հողերի օտարումից սույն օրենքի N 1 հավելվածով սահմանված մուտքերի՝ Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջե ստացմանը համամասնորեն.

14) Երևան քաղաքի վարչական սահմաններում թույլ տված վարչական իրավախախտումների համար Երևանի քաղաքապետի որոշումներով նշանակված տուգանքներից (տույժերից) Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջե ստացվող բյուջետային եկամուտներն ուղղվում են Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորմանը՝ կառավարության սահմանած կարգով.

15) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության ստորաբաժանումների կողմից պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության ապահովման գծով Հայաստանի Հանրապետության անունից իրականացվող ծառայությունների դիմաց ստացվող վճարների գումարների 2009 թվականի օգտագործման ուղղությունները (տարեկան ծախսերի նախահաշվի ձևով) և կարգը հաստատում է կառավարությունը:

Սույն կետում նշված ծախսերի ֆինանսավորումը, հաստատված նախահաշվին համապատասխան, 2009 թվականին իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության ստորաբաժանումների կողմից պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության ապահովման գծով Հայաստանի Հանրապետության անունից իրականացվող ծառայությունների դիմաց 2009 թվականին ստացվող վճարների գումարների, ինչպես նաև մինչև 2009 թվականի հունվարի 1-ը մատուցված ծառայությունների դիմաց ստացված վճարների՝ 2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ չօգտագործված գումարների հաշվին.

16) «ՎՏԲ - Հայաստան բանկ» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների կողմից նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ այդ փոխհատուցումն ստացած անձանց աղքատության ընտանեկան նպաստներ ստացողների ցուցակներից հանելու համար.

17) 2009 թվականին շարունակվում է «ՎՏԲ - Հայաստան բանկ» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների՝ նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրած դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրումը՝ «Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 9-րդ կետով հաստատված ծրագրի շրջանակներում հաշվառված անձանց մասով՝ այդ ծրագրին համապատասխան (հաշվի առած «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ կետի պահանջը).

18) «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ կետին համապատասխան՝ պետական հիմնարկների համար կառավարության ընդունած որոշումների համաձայն բացված արտաբյուջետային միջոցների հաշիվների (բացառությամբ դատական, իրավապահ և դատական ակտերի հարկադիր կատարման մարմինների դեպոզիտային, իրավաբանական անձանց սպասարկման նպատակով պետական հիմնարկների համար բացված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության համար բացված դեպոզիտային (արտարժութային) հաշիվների), ինչպես նաև հարկային և մաքսային մարմինների և ճանապարհային ոստիկանության աշխատակիցների խրախուսման և (կամ) համակարգի զարգացման նպատակային ֆոնդերի հաշիվների միջոցների շրջանառությունը 2009 թվականի ընթացքում

իրականացվում և այդ հաշիվների մուտքերի և ելքերի նախահաշվային ու փաստացի ցուցանիշները Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվություններում արտացոլվում են որպես պետական բյուջեի համապատասխան մուտքեր և ելքեր՝ կառավարության սահմանած կարգով: Ընդ որում, նախահաշիվներով նախատեսվող՝ 2009 թվականի բյուջետային տարվա եկամուտների գումարների չափով ենթակա են ավելացման սույն օրենքի 2-րդ և 6-րդ հոդվածներով հաստատված բյուջետային եկամուտների գումարները, ծախսերի նախահաշվային գումարների չափով՝ սույն օրենքի 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված բյուջետային ծախսերի համապատասխան գումարները (սույն կետում նշված նախահաշիվներին համապատասխան ֆինանսավորվող ծրագրերը և դրանց գծով նախատեսվող ծախսերը որպես առանձին լրացուցիչ ծրագրեր արտացոլելով սույն օրենքի N 1 հավելվածի՝ այդ ծրագրերին համապատասխանող բաժիններում), իսկ եկամուտների և ծախսերի նախահաշվային գումարների դրական կամ բացասական տարբերության չափով՝ համապատասխանաբար պակասեցման կամ ավելացման՝ սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) ընդհանուր գումարը և սույն օրենքի 3-րդ հոդվածով և N 4 հավելվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարները (անհրաժեշտության դեպքում լրացում կատարելով այդ տարրերի կազմում).

19) աղետի գոտում անօթևան մնացած ընտանիքներին բնակարաններով ապահովելու նպատակով 2008 և 2009 թվականների ընթացքում կնքված և կառավարության կողմից սահմանված անշարժ գույքի ձեռքբերման պայմանագրերով նախատեսված ֆինանսական պարտավորությունները կկատարվեն նաև հաջորդ տարիների պետական բյուջեների միջոցների հաշվին:

Հոդված 10. Հաստատել՝

1) սույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված բյուջետային հատկացումների բաշխումը՝ ըստ Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների՝ սույն օրենքի N 1 հավելվածի համաձայն.

2) Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման դոտացիաների ձևով տրամադրվող հատկացումների՝ ըստ օրենքով սահմանված գործոնների բաշխման ենթակա հետևյալ ընդհանուր գումարները՝

- «ա» գործոնով և 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքներին տրամադրվող դոտացիայի ընդհանուր գումարը՝ 14,400,000.0 հազար դրամ, որից 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող յուրաքանչյուր համայնքին տրամադրվող դոտացիայի տարեկան գումարը՝ 2,000.0 հազար դրամ,

- «բ» գործոնով տրամադրվող դոտացիայի ընդհանուր գումարը՝ 13,091,019.5 հազար դրամ.

3) համայնքների բյուջեներին օրենքով ֆինանսական համահարթեցման դոտացիաներ և Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների 2007 թվականի բյուջեներում եկամուտների կորուստների փոխհատուցման նպատակով գումարներ տրամադրելու համար սույն օրենքի N 1 հավելվածով նախատեսված հատկացումների ընդհանուր ծավալների բաշխումը՝ ըստ առանձին համայնքների՝ սույն օրենքի N 2 հավելվածի համաձայն.

4) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համակարգի 2009 թվականի ծախսերի նախահաշիվը՝ 2,591,000.0 հազար դրամ գումարով՝ սույն օրենքի N 3 հավելվածի համաձայն.

5) սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ ըստ առանձին տարրերի՝ սույն օրենքի N 4 հավելվածի համաձայն.

6) «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեից սուբվենցիաներ ստացող համայնքների ցանկը և այդ սուբվենցիաները տրամադրելու համար նախատեսված հատկացումների գումարները՝ սույն օրենքի N 5 հավելվածի համաձայն.

7) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2009 թվականի վարչական ծախսերի նախահաշիվը՝ 4,776,823.6 հազար դրամ գումարով՝ սույն օրենքի N 6 հավելվածի համաձայն և կապիտալ ներդրումների առավելագույն սահմանաքանակը՝ 20,501,714.3 հազար դրամ:

Հոդված 11. Թույլատրել կառավարությանը 2009 թվականին անհրաժեշտության դեպքում՝

1) վերաբաշխել սույն օրենքի N 1 հավելվածում բյուջետային ծախսերի գործառական դասակարգման նույն բաժնի խմբի դասին պատկանող նույն ծախսային ծրագիրն իրականացնող Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների միջև՝ նրանց գծով տվյալ ծրագիրն իրականացնելու համար սույն օրենքով հաստատված հատկացումները.

2) փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարել բյուջետային ծախսերի գործառական դասակարգման նույն բաժնի խմբի դասին պատկանող՝ սույն օրենքի N 1 հավելվածով սահմանված նույն ծախսային ծրագիրն իրականացնող Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության համապատասխան մարմինների ցանկերում.

3) սույն կետով սահմանված դեպքերում կատարված ծախսերը և ստացված եկամուտներն արտահայտելով Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններում և այդ գումարների չափով ավելացնելով սույն օրենքի 2-րդ և 6-8-րդ հոդվածներով հաստատված բյուջետային եկամուտների և ծախսերի (դրանք արտացոլելով նաև սույն օրենքի N 1 հավելվածի համապատասխան բաժիններում որպես առանձին լրացուցիչ ծախսային ծրագրեր) գումարները, Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեից առանց սահմանափակման իրականացնել՝

ա. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վճարումները,

բ. Հայաստանի Հանրապետության հարկային կամ մաքսային մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններում և պետական հիմնարկներում օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված ստուգումների և վերստուգումների արդյունքում հարկերի և այլ պարտադիր վճարների գծով առաջադրված լրացուցիչ պարտավորությունների մարման համար անհրաժեշտ վճարումները,

գ. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան ոչ կառավարչական բնույթի գործունեություն իրականացնող պետական (բյուջետային) հիմնարկների պետական ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրում պետական գրանցման, կնիքների պատրաստման թույլտվության, ինչպես նաև կազմակերպությանը սեփականության կամ օգտագործման իրավունքով հանձնված գույքի նկատմամբ իրավունքների գրանցում կատարելու համար «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վճարումները,

դ. պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից գույք առանձնացնե-

լիս՝ գույքն ստացող պետական կառավարչական հիմնարկի կողմից մատակարարին վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի պարտավորության կատարման գծով ծախսերը,

ե. սոցիալական ապահովության մարմիններից արտոնյալ պայմաններով ավտոմեքենաներ ստացած հաշմանդամներին վարորդական իրավունքի վկայական և ավտոմեքենայի պետական համարանիշ տալու, ինչպես նաև ավտոմեքենայի գրանցման ու վերագրանցման համար «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վճարումների գծով այդ հաշմանդամների փոխարեն, նշված օրենքի 31-րդ հոդվածի պահանջների համաձայն, կառավարության կողմից կատարվող ծախսերը.

4) պետական սեփականություն համարվող գույքը հիմնադրամներին վարձակալության հանձնելիս՝ հաշվարկված վարձակալական վճարները, կառավարության սահմանած դեպքերում, թողնել հիմնադրամների տնօրինությանը՝ որպես Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրամներում կատարվող կամավոր գույքային վճար՝ առանց սահմանափակման, այդ գումարներն արտահայտելով Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունների ծախսային մասում, որպես պետական բյուջեից (կառավարության պահուստային ֆոնդից) հիմնադրամներին կատարված հատկացումներ, իսկ եկամուտներում՝ որպես այդ հիմնադրամների կողմից պետական բյուջե մուծված վարձակալական նույն չափերի վճարների ստացում.

5) բյուջետային տարվա առանձին ժամանակահատվածներում պետական բյուջեում՝ սույն օրենքի համաձայն բյուջետային ելքերի ֆինանսավորման համար միջոցների անբավարարության առաջացման դեպքում, ժամանակավորապես, մինչև 2009 թվականի դեկտեմբերի 15-ը վերականգնելու պայմանով, ներգրավել առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցումից (սեփականաշնորհումից) ստացված միջոցների կուտակման նպատակով բացված գանձապետական միասնական հաշվի սեփականաշնորհման հատուկ ենթահաշվում միջոցների առկա մնացորդի՝ սույն օրենքով նախատեսված բյուջետային ծախսերի ֆինանսավորմանը չուղղված գումարը, ներկայացնելով այդ ենթահաշվի շարժը Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններում (առանձին հավելվածով).

6) սույն օրենքի 6-րդ հոդվածով բյուջետային եկամուտների ըստ դրանց ձևավորման («Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում նշված) առանձին աղբյուրների գծով սահմանված համապատասխան գումարները պետական բյուջեի կատարման ընթացքում գերազանցած՝ լրացուցիչ ստացված

եկամուտների գումարի չափով ավելացնել սույն օրենքի 2-րդ և 6-րդ հոդվածներով հաստատված բյուջետային եկամուտների գումարները, ինչպես նաև ըստ այդ եկամուտների հաշվին կատարվելիք բյուջետային ելքերի պատկանելիության համապատասխան փոփոխության ենթարկել բյուջետային ծախսերի ֆինանսավորման համար սույն օրենքի 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված բյուջետային հատկացումների գումարները և N 1 հավելվածով նախատեսված «Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդ» ծրագրի (և (կամ) նույն հավելվածով նախատեսված որևէ այլ ծախսային ծրագրի) գծով սահմանված հատկացումները, և (կամ) սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի), սույն օրենքի 3-րդ հոդվածով և N 4 հավելվածով սահմանված դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարները (անհրաժեշտության դեպքում լրացում կատարելով այդ տարրերի կազմում), դրանց օգտագործումն իրականացնելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան (սույն կետի գործողությունը չի տարածվում սույն հոդվածի 3-րդ, 11-րդ, 15-րդ և 16-րդ կետերով, ինչպես նաև սույն օրենքի 9-րդ հոդվածի 18-րդ կետով նախատեսված դեպքերի վրա).

7) բյուջետային տարվա արդյունքներով՝ գերազանցել սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) գումարը՝ ներքին և արտաքին աղբյուրներից բյուջետային վարկերի վերադարձից ստացված՝ սույն օրենքի N 4 հավելվածով այդ մուտքի գծով նախատեսված մակարդակը գերազանցած գումարից ոչ ավելի չափով (նույն չափով ավելացնելով N 4 հավելվածով նախատեսված բյուջետային վարկերի վերադարձից գումարը), և ըստ այդ գումարի հաշվին կատարվելիք ելքերի պատկանելիության համապատասխան փոփոխության ենթարկել սույն օրենքի 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված ծախսերի և դեֆիցիտի (պակասուրդի) ընդհանուր գումարները, 3-րդ հոդվածով և սույն օրենքի N 4 հավելվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարները (անհրաժեշտության դեպքում լրացում կատարելով այդ տարրերի կազմում), ինչպես նաև N 1 հավելվածով նախատեսված «Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդ» կամ որևէ այլ ծախսային ծրագրի գծով սահմանված հատկացումները, և դրանց օգտագործումն իրականացնել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան.

8) բյուջետային տարվա արդյունքներով՝ գերազանցել սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) գումարը՝ ներքին և արտաքին աղբյուրներից ստացված փոխառությունների՝ սույն օրենքի N 4 հավելվածով նախատեսված մարումների գծով առաջացող (այդ թվում նաև՝ փոխատուի հետ փոխադարձ համաձայնության դեպքում մարումը չկատարելու դեպքում առաջացող) տնտեսումների գումարից ոչ ավելի չափով (այդ գումարի չափով նվազեցնելով N 4 հավելվածով նախատեսված փոխառությունների մարումների գումարը) և ըստ այդ տնտեսված գումարի հաշվին կատարվելիք ելքերի պատկանելիության համապատասխան փոփոխության ենթարկել սույն օրենքի 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված ծախսերի և դեֆիցիտի (պակասուրդի) ընդհանուր գումարները, 3-րդ հոդվածով և N 4 հավելվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարները (անհրաժեշտության դեպքում լրացում կատարելով այդ տարրերի կազմում), ինչպես նաև N 1 հավելվածով նախատեսված «Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդ» կամ որևէ այլ ծախսային ծրագրի գծով սահմանված հատկացումները, և դրանց օգտագործումն իրականացնել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան.

9) վերաբաշխել սույն օրենքի N 3 հավելվածով սահմանված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2009 թվականի ծախսերը (ինչպես ըստ ծախսային հոդվածների, այնպես էլ կոմիտեի կենտրոնական ապարատի և ստորաբաժանումների միջև) այն պայմանով, որ թույլ չտրվի կոմիտեի՝ սույն օրենքի N 1 հավելվածում բերված ծախսային ծրագրերի գծով նախատեսված հատկացումների ծավալների փոփոխություն և սույն օրենքի N 3 հավելվածով սահմանված յուրաքանչյուր ծախսային հոդվածի գծով նախատեսված ծախսերի ընդհանուր գումարի կրճատում՝ 15 տոկոսի, կամ ավելացում՝ 30 տոկոսի չափով.

10) «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածին և սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 12-րդ կետերին համապատասխան թույլատրվող վերաբաշխումներով պայմանավորված փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարել սույն օրենքի NN 2, 3 և 5 հավելվածներում, ինչպես նաև NN 1 և 4 հավելվածների համապատասխան աղյուսակներում.

11) սույն օրենքի 6-րդ հոդվածով հաստատված եկամուտների կազմում չնախատեսված և պետական բյուջե մուտքագրված նվիրաբերված գումարներն ըստ նվիրաբերողի կողմից որոշված ուղղություն-

ների, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն օգտագործելու դեպքում այդ գումարների չափով ավելացնել սույն օրենքի 2-րդ և 6-րդ հոդվածներով հաստատված բյուջետային եկամուտների գումարը և ըստ այդ եկամուտների հաշվին կատարվելիք բյուջետային ելքերի պատկանելիության փոփոխության ենթարկել սույն օրենքի 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված բյուջետային ծախսերի համապատասխան գումարներն ու N 1 հավելվածով նախատեսված սույն կետում նշված եկամուտների հաշվին ֆինանսավորվող համապատասխան ծախսային ծրագրերի գծով սահմանված հատկացումները և (կամ) սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) և սույն օրենքի 3-րդ հոդվածով, ինչպես նաև սույն օրենքի N 4 հավելվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարները (եթե սույն կետում նշված եկամուտների հաշվին ֆինանսավորվող ծրագրերը նախատեսված չեն սույն օրենքի N 1 և (կամ) N 4 հավելվածներում, ապա դրանք որպես առանձին լրացուցիչ ծրագրեր ըստ պատկանելիության արտացոլել նշված հավելվածների՝ այդ ծրագրերին համապատասխանող բաժիններում).

12) պահպանելով սույն օրենքի N 1 հավելվածում ներկայացված յուրաքանչյուր ծախսային ծրագրի գծով սահմանված հատկացումների ընդհանուր գումարը՝ փոփոխել վերջինիս բաշխումն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգմամբ սահմանված հոդվածների (առանց վերաբաշխվող գումարների սահմանափակման).

13) բյուջետային ելքերի ֆինանսավորման համար 2009 թվականի բյուջետային տարվա ընթացքում պետական բյուջեում միջոցների անբավարարության առաջացման դեպքում դրանց ֆինանսավորմանն ուղղել առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցումից (սեփականաշնորհումից) ստացված միջոցների՝ սույն օրենքով նախատեսված բյուջետային ծախսերի ֆինանսավորմանը չուղղված գումարները, ինչպես նաև սույն օրենքի 3-րդ հոդվածով հաստատված՝ պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման արտաքին աղբյուրների կազմում չնախատեսված, սակայն 2009 թվականի բյուջետային տարվա ընթացքում փաստացի ստացված վարկային գումարները.

14) Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծախսային ծրագրերի կատարման ընթացքին նպաստելու նպատակով՝

ա. սույն օրենքի N 1 և N 4 հավելվածով նախատեսված ծրագրերը ֆինանսավորելիս (նշված ծախսե-

րի ֆինանսավորման համապատասխան վարկային աղբյուրների առկայությամբ), չգործադրելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված բյուջետային հատկացումների վերաբաշխման մեխանիզմը և 19-րդ հոդվածի դրույթները, գերազանցել դրանց գծով սույն օրենքի N 1 հավելվածի N 14 աղյուսակով և N 4 հավելվածով սահմանված՝ արտաքին աղբյուրներից ստացվող վարկերի հաշվին առանձին ծրագրերի գծով սահմանված հատկացումների գումարները, այդ ծրագրերի գծով սահմանված հատկացումների ընդհանուր գումարը, ինչպես նաև սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) և 3-րդ հոդվածով ու N 4 հավելվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարները,

բ. 2009 թվականի բյուջետային տարվա ընթացքում ֆինանսավորել սույն օրենքի N 1 և (կամ) N 4 հավելվածներով չնախատեսված վարկային ծրագրերը՝ դրանց գծով օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը հատկացված նպատակային վարկային միջոցների հաշվին, եթե այդ ծրագրերի գծով կառավարության կնքած վարկային, կամ այլ ֆինանսական պարտավորություններ նախատեսող միջազգային պայմանագրերն օրենքով սահմանված կարգով վավերացված կամ հաստատված են: Այդ ծրագրերի գծով Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջե ստացվող վարկերի հաշվին կատարված ելքերի գումարից ոչ ավելի չափով ավելացնել սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) ընդհանուր գումարը, ինչպես նաև ըստ այդ գումարի հաշվին կատարված ելքերի պատկանելիության համապատասխան փոփոխության ենթարկել 3-րդ հոդվածով և N 4 հավելվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարները, 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված բյուջետային ծախսերի համապատասխան գումարները (սույն կետում նշված ծախսերը որպես առանձին լրացուցիչ ծրագրեր ըստ պատկանելիության արտացոլելով սույն օրենքի N 1 և (կամ) N 4 հավելվածների՝ այդ ծրագրերին համապատասխանող բաժիններում),

գ. 2009 թվականի բյուջետային տարվա ընթացքում լրացուցիչ ֆինանսավորել սույն օրենքի N 1 և (կամ) N 4 հավելվածներով նախատեսված, ինչպես նաև ֆինանսավորել այդ հավելվածներով չնախատեսված դրամաշնորհային ծրագրերը՝ դրանց գծով օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից մինչև 2009 թվականի հունվարի 1-ը ստացված միջոցների չօգտագործված

մնացորդի հաշվին (այդ գումարի չափով ավելացնելով N 4 հավելվածով նախատեսված՝ ելքերի ֆինանսավորմանն ուղղվող պետական բյուջեի 2009 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի միջոցների գումարը), և ըստ այդ միջոցների հաշվին կատարված ելքերի պատկանելիության համապատասխան փոփոխության ենթարկել սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) ընդհանուր գումարը, 3-րդ հոդվածով և N 4 հավելվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարները, ինչպես նաև 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված բյուջետային ծախսերի համապատասխան գումարները (սույն օրենքի N 1 և (կամ) N 4 հավելվածներով այդ դրամաշնորհային ծրագրերը չնախատեսված լինելու դեպքում՝ դրանք որպես առանձին լրացուցիչ ծրագրեր ըստ պատկանելիության արտացոլելով հիշյալ հավելվածների՝ այդ ծրագրերին համապատասխանող բաժիններում).

15) պետական սեփականություն համարվող և Երևանի քաղաքապետարանին հանձնվող ինքնակամ կառույցների ուղղակի վաճառքից կամ աճուրդով օտարումից Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջե ստացվող բյուջետային մուտքերի հաշվին կատարված ծախսերի գումարի չափով ավելացնել սույն օրենքի 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված բյուջետային ծախսերի և ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի համապատասխան գումարները (սույն կետում նշված մուտքերը և դրանց հաշվին ֆինանսավորվող ծախսերն արտացոլելով սույն օրենքի N 1 հավելվածի 04 բաժնի 09 խմբի 01 դասում՝ որպես առանձին լրացուցիչ ծրագիր).

16) Երևան քաղաքում ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման վճարներից, պետական սեփականություն համարվող և Երևանի քաղաքապետարանին հանձնվող ինքնակամ կառույցների վարձակալությունից, ինչպես նաև Երևան քաղաքի վարչական սահմաններում թույլ տված վարչական իրավախախտումների համար Երևանի քաղաքապետի որոշումներով նշանակված տուգանքներից (տույժերից) Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջե ստացվող բյուջետային եկամուտների գումարի չափով ավելացնել սույն օրենքի 2-րդ և 6-րդ հոդվածներով հաստատված բյուջետային եկամուտների և 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված բյուջետային ծախսերի համապատասխան գումարները (սույն կետում նշված եկամուտների հաշվին ֆինանսավորվող համապատասխան ծախսերն արտացոլելով սույն օրենքի N 1 հավելվածի 04 բաժնի 09 խմբի 01 դասում՝ որպես առանձին ծրագիր).

17) «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված, սակայն այդ տարում չստացված և սույն օրենքի 6-րդ հոդ-

վածով հաստատված եկամուտների կազմում չնախատեսված պաշտոնական դրամաշնորհների գումարները 2009 թվականին ստանալու դեպքում այդ գումարներն առաջնահերթության կարգով ուղղել դրանց չստացման հետևանքով առաջացած բյուջետային պարտքերի մարմանը.

18) բյուջետային տարվա ընթացքում, չգերազանցելով պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի)՝ սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված գումարը, վերաբաշխել պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման առանձին աղբյուրների, ինչպես նաև վերջիններիս առանձին տարրերի միջև դրանց գծով սույն օրենքի 3-րդ հոդվածով և N 4 հավելվածով հաստատված գումարները, և (կամ) կատարել պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների ընդհանուր գումարի ավելացմանը չհանգեցնող այլ հավասարակշռված փոփոխություններ՝ դրանցից բխող համապատասխան փոփոխություններ կատարելով սույն օրենքի NN 2, 3 և 5 հավելվածներում և N 1 հավելվածի համապատասխան աղյուսակներում.

19) ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվող մուտքերի՝ սույն օրենքով սահմանված գումարը պետական բյուջեի կատարման ընթացքում գերազանցած՝ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից լրացուցիչ ստացված մուտքերի չափով ավելացնել սույն օրենքի N 1 հավելվածով համապատասխան մուտքային ծրագրի գծով ոչ ֆինանսական ակտիվների օտարումից նախատեսված մուտքերի գումարը, ինչպես նաև ըստ այդ մուտքերի հաշվին կատարվելիք բյուջետային ելքերի պատկանելիության համապատասխան փոփոխության ենթարկել՝ սույն օրենքի 2-րդ, 7-րդ, 8-րդ հոդվածներով հաստատված և N 1 հավելվածով նախատեսված «Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդ» ծախսային ծրագրի (և (կամ) նույն հավելվածով նախատեսված որևէ այլ ծախսային ծրագրի) գծով սահմանված հատկացումները, և (կամ) սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) և 3-րդ հոդվածով, ինչպես նաև N 4 հավելվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարները (անհրաժեշտության դեպքում լրացում կատարելով այդ տարրերի կազմում): Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվող մուտքերի՝ սույն օրենքով սահմանված գումարը պետական բյուջեի կատարման ընթացքում գերազանցած՝ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից լրացուցիչ ստացված մուտքերի օգտագործումն իրականացնել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան.

20) սույն օրենքի N 1 հավելվածով նախատեսված «Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդ» ծախսային ծրագրի (կամ նույն հավելվածով նախատեսված որևէ այլ ծախ-

սային ծրագրի) գծով սահմանված հատկացումների հաշվին բյուջետային վարկերի կամ փոխատվությունների տրամադրման կամ մարման, արժեթղթերի (ներառյալ՝ բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության) գնման կամ մարման գծով գործառույթների իրականացման դեպքում նշված գումարների չափով նվազեցնել սույն օրենքի 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված ծախսերի և դեֆիցիտի (պակասուրդի) ընդհանուր գումարները և N 1 հավելվածով նախատեսված տվյալ ծախսային ծրագրի գծով սահմանված հատկացումների գումարը, ինչպես նաև այդ նվազեցումներից բխող համապատասխան փոփոխություններ կատարել սույն օրենքի 3-րդ հոդվածով և փոփոխություններ կամ (և) լրացումներ՝ N 4 հավելվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարներում և կազմում.

21) բյուջետային տարվա ընթացքում, պահպանելով սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված բյուջետային եկամուտների ընդհանուր գումարը, բյուջետային եկամուտների ձևավորման՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում նշված առանձին աղբյուրների դասակարգման խմբերի միջև կատարել սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված համապատասխան գումարների վերաբաշխումներ՝ դրանցից բխող համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելով սույն օրենքի NN 2, 3 և 5 հավելվածներում, ինչպես նաև N 1 և N 4 հավելվածների համապատասխան աղյուսակներում:

Հոդված 12. Թույլատրել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին՝ անհրաժեշտության դեպքում վերաբաշխել սույն օրենքի N 6 հավելվածով սահմանված վարչական ծախսերը (ըստ ենթահոդվածների) այն պայմանով, որ թույլ չտրվի վարչական ծախսերի սույն օրենքի N 6 հավելվածով սահմանված յուրաքանչյուր ենթահոդվածի գծով նախատեսված ծախսերի կրճատում 15 տոկոսի կամ ավելացում՝ 30 տոկոսի չափով:

Հոդված 13. Սույն օրենքի NN 1-6 հավելվածները համարվում են սույն օրենքի անբաժանելի մասերը:

Հոդված 14. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2009 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ